

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Օրակարգ.

1. Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի ասպիրանտ Հռիփսիմե Հրանտի Ժամհարյանի ատենախոսության թեմայի հաստատման հարցը:
2. Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի ասպիրանտ Դավթյան Անահիտի ատենախոսության թեմայի հաստատման հարցը:
3. Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի ասպիրանտ Սոնյա Մանվելի Մսրյանի ատենախոսության թեմայի հաստատման հարցը:
4. Սոցիոլոգիայի պատմության և տեսության ամբիոնի ասպիրանտ Օֆելիա Գրիգորյանի ատենախոսության թեմայի հաստատման հարցը:
5. Սոցիոլոգիայի ֆակուլտետի առաջարկությունները՝ մասնագիտական պատրաստման ծրագրերի վերաբերյալ:
6. Սոցիոլոգիայի ֆակուլտետի առաջարկությունները՝ Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրագույն կրթական ծրագրի վերաբերյալ:
7. «Անգլերեն լեզու. ուսումնառության ձևերի և մեթոդների սոցիալական աշխատանք բաժնի ուսանողների համար» ձեռնարկի՝ հրատարակմանը երաշխավորման հարցը
8. Այլ հարցեր :

Լսեցին 1. Սոցիոլոգիայի պատմության և տեսության ամբիոնի ասպիրանտ Հռիփսիմե Հրանտի Ժամհարյանի ատենախոսության թեմայի հաստատման հարցը:

Ելույթ ունեցան՝ Ա. Սկրտիչյանը, Ա. Աթանեսյանը, Ա. Մահակյանը, Ա. Խաչատրյանը:

Որոշեցին. Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի ասպիրանտ ամբիոնի ասպիրանտ Հռիփսիմե Հրանտի Ժամհարյանի ատենախոսության թեման հաստատել. «Ուսանողների գիտելիքների չափման հիմնախնդիրները ՀՀ բարձրագույն կրթության համակարգում», ԻԲ 00.02 - « Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդիկա» մասնագիտությամբ, գիտական ղեկավար՝ Սոցիոլոգիայի ֆակուլտետի կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի դոցենտ, ս.գ.դ. Մ. Ի. Զասլավսկայա :

Լսեցին 2. Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի ասպիրանտ Անահիտի Ժորայի Դավթյանի ատենախոսության թեմայի հաստատման հարցը:

Ելույթ ունեցան՝ Ա. Սկրտիչյանը, Ա. Աթանեսյանը, Ա. Մահակյանը, Ա. Խաչատրյանը:

Որոշեցին. Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի ասպիրանտ Դավթյան Անահիտի ատենախոսության թեման հաստատել. «Հայաստանյան հասարակությունում

սոցիալական կոնսետուսի ձևավորման և ապահովման մեղիա մեխանիզմներն ու պրակտիկաները», ԻԲ 00.03 - « Միջին մակարդակի տեսություններ, սոցիալական կառույցներ, սոցիալական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ, գիտական ղեկավար՝ Սոցիոլոգիայի ֆակուլտետի կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի դոցենտ, ս.գ.թ. Ն. Ա. Մելքոնյան:

Լսեցին 3. Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի ասպիրանտ Սոնյա Մանվելի Մսրյանի ատենախոսության թեմայի հաստատման հարցը:

Ելույթ ունեցան՝ Ա. Սկրտիչյանը, Ա. Աթանեսյանը, Ա. Սահակյանը, Ա. Խաչատրյանը:

Որոշեցին. Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի ասպիրանտ Սոնյա Մանվելի Մսրյանի ատենախոսության թեման հաստատել. «Քաղաքացիական գիտակցության չափման մոդելի կառուցումը հայաստանյան հասարակության օրինակով», ԻԲ 00.02 – «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդիկա» մասնագիտությամբ, գիտական ղեկավար՝ ս.գ. թ. Ս. Մանուկյան:

Լսեցին 4. Սոցիոլոգիայի պատմության և սեսության ամբիոնի ասպիրանտ Օֆելիա Գրիգորյանի ատենախոսության թեմայի հաստատման հարցը:

Ելույթ ունեցան՝ Ա. Սկրտիչյանը, Ա. Աթանեսյանը, Ա. Սահակյանը, Ա. Խաչատրյանը:

Որոշեցին. Սոցիոլոգիայի պատմության և սեսության ամբիոնի ասպիրանտ Օֆելիա Գրիգորյանի ատենախոսության թեման հաստատել. «Սոցիոլինգվիստիկայի գաղափարները 20-րդ դարի 2-րդ կեսի արևմտաեվրոպական սոցիոլոգիայում», ԻԲ.00.01– «Սոցիոլոգիայի պատմություն, տեսություններ, մեթոդաբանություն» մասնագիտությամբ, գիտական ղեկավար՝ Սոցիոլոգիայի ֆակուլտետի ղեկան փ. գ. դ. պրոֆեսոր Ա. Ե. Մկրտիչյան:

Լսեցին 5. Սոցիոլոգիայի ֆակուլտետի առաջարկությունները՝ մասնագիտական պատրաստման ծրագրերի վերաբերյալ:

Ելույթ ունեցան՝ Ա. Սկրտիչյանը, Ա. Աթանեսյանը, Ա. Սահակյանը, Ա. Խաչատրյանը:

Որոշեցին. Սոցիոլոգիայի ֆակուլտետը մասնագիտական պատրաստման ծրագրերի վերաբերյալ անել հետևյալ առաջարկությունները.

1. Բակալավրիատի առկա կրթական ծրագրի մասով.

- Առաջինից չորրորդ կիսամյակ տալ ընդհանուր միասնական հենքով հիմնարար կրթություն, տեղափոխելով բոլոր կամընտրական առարկաները ավելի բարձր կիսամյակներ, ինչը համահունչ է միջազգային առաջավոր փորձին :

- Մաթեմատիկա առարկան դարձնել պարտադիր բոլոր ֆակուլտետների համար :
- Հիմնարար կրթության առարկաների շարքում ներառել նաև տրամաբանություն առարկայի պարտադիր դասավանդումը : Փոխարենը փիլիսոփայություն առարկան բակալավրիատի ծրագրից հանել և տեղափոխել մագիստրատուրա :
- Կամընտրական առարկա դարձնել Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ առարկան :
- Ծրագրից հանել բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ առարկան, ինչպես նաև մշակութաբանություն առարկան :
- Ֆիզդաստիարակություն առարկան դարձնել կրեդիտանոց առարկա :
- Տնտեսագիտություն առարկային զուգահեռ որպես կամընտրական ներդնել սոցիոլոգիա առարկան, քանի որ բոլոր հասարակական գիտությունների գծով հետազոտությունների իրականացումը ենթադրում է սոցիոլոգիական մեթոդների իմացություն :
- Կրճատել հայոց պատմության հիմնահարցեր առարկային տրամադրվող դասաժամերը :
- Ընդհանուր մասնագիտական դասընթացների հարաբերակցությունը այլ կրթական մոդուլներին սահմանել 50% , իսկ հատուկ մասնագիտական դասընթացների հարաբերակցությունը 10% :
- Բակալավրիատի համար մոդուլների քանակը սահմանել 60 :

2. Բակալավրիատի հեռակա կրթական ծրագրի մասով՝ ծրագրի լսարանային ընդհանուր ծանրաբեռնվածությունը սահմանել առկայի 25% -ի չափով :

- 6-րդ կիսամյակը տրամադրել բացառապես պրակտիկայի կազմակերպման և անցկացման համար :
- 7-ից 9-րդ կիսամյակներում դասավանդումը իրականացնել հեռավար ուսուցման եղանակով, ինչը թույլ կտա լուծել լսարանային սղության խնդիրը :
- 10-րդ կիսամյակը տրամադրել բացառապես ավարտական աշխատանքի իրականացմանը :

3. Մագիստրատուրայի առկա կրթական ծրագրի մասով.

- Փիլիսոփայություն և անգլերեն դասընթացների համար սահմանել երեքական կրեդիտ :
- Տիտղոսային ծրագրի պարտադիր և կամընտրանական դասընթացների մասնաբաժինը սահմանել 50% -ի չափով :
- Հարակից ծրագրերից ընտրովի դասընթացները թողնել 2-ը, որպես հարակից հասկանալ մասնագիտությունների ցանկում միևնույն խմբում ընդգրկված մասնագիտությունների գծով դասընթացները :
- Մագիստրոսի կրթական ծրագրից հանել գիտահետազոտական աշխատանքի համար տրվող կրեդիտները, քանի որ այդ աշխատանքի վերջնարդյունքը մագիստրոսական թեզն է, որի համար կրեդիտներ արդեն

սահմանված են : Փոխարենը ավելացնել գիտահետազոտական պրակտիկական նաև 2-րդ կիսամյակում :

- Մագիստրատուրայում կրթական մոդուլների թիվը սահմանել 30 :

4. Մագիստրատուրայի հեռակա կրթական ծրագրի մասով.

- Ծրագրի լսարանային ընդհանուր ծանրաբեռնվածությունը սահմանել առկայի 25% -ի չափով :
- Գիտահետազոտական և գիտամանկավարժական պրակտիկաները կազմակերպել 4-րդ կիսամյակում : 5-րդ տրամադրել մագիստրոսական թեզին :

Լսեցին 6. Սոցիոլոգիայի ֆակուլտետի առաջարկությունները՝ Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման կրթական ծրագրի վերաբերյալ :

Ելույթ ունեցան՝ Ա. Սկրտիչյանը, Ա. Աթանեսյանը, Ա. Մահակյանը, Ա. Խաչատրյանը:

Որոշեցին. Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման կրթական ծրագրին հնգամյա փորձը՝ որոշեց մի շարք առաջարկություններ անել՝ ծրագրի բարելավման ուղղությամբ.

- Ծրագրի կառուցվածքն առաջարկում ենք տարբերակել ըստ պարտադիր և կամընտրական բաղադրիչների:
- Հաշվի առնելով դասախոսների ատեստավորման վերաբերյալ առաջատար բուհերի փորձը՝ առաջարկվում է կարևորել դասախոսների հետազոտական գործունեությունն ու հրատարակումները: Ներկայումս ատեստավորման 5 տարիների ընթացքում պարտադիր ընդամենը 1 հոդված պահանջելը (նաև՝ մեկական ուսումնամեթոդական աշխատանք և զեկուցում) շատ ցածր ցուցանիշ է : Այն առաջարկվում է համապատասխանաբար բարձրացնել:
- Դասավանդման, ուսումնառության և գնահատման ժամանակակից մեթոդներ դասընթացը դարձնել կամընտրական, նաև՝ վերանայել առկա բովանդակությունն ու մատուցման եղանակները, որոնք ներկայիս տեսքով հասցեագրված են միայն սկսնակ դասավանդողներին:
- Օտար լեզուն չսահմանափակել միայն անգլերենով: Օտար լեզվի ուսուցումը հատկապես A 0 մակարդակի համար կազմակերպել մեկ կիսամյակ:
- Լեզուների և համակարգչային ուսուցումները կազմակերպել ֆակուլտետներում (տե՛ս՝ աղյուսակում).

Մոդուլի անվանումը	Սահմանված կրեդիտը	Ժամաքանակը լսար./ինքն.	Գնահատման ձևը
Ա. ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ	10 9		
1.Անգլերենը ակադեմիական միջավայրում (սահմանված վեց մակարդակից մեկը)	3	60/30	քննություն
2.Համակարգչային գրագիտություն (կիրառական ծրագրեր՝ Word, Excel, Internet Explorer և այլն)	2 1	10/20	ստուգարք
3. Լսարանային ցուցադրությունների պատրաստում (PowerPoint և այլն)	2 2	20/40	ստուգարք

4. Գասավանդման, ուսումնառության և գնահատման ժամանակակից մեթոդներ (կամընտրական)	±	10/20	ստուգարք
5. Մասնագիտության արդի հիմնախնդիրները	2-3	30/60	ստուգարք
6. Մասնակցություն մասնագիտական գիտաժողովին կամ մասնագիտական այլ վերապատրաստմանը՝ հավաստագրով	1		
Բ. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ	3-3		հավաստագրում
1. Գիտական հոդված, այդ թվում՝ գեկուցումների հիման վրա հրատարակված	±3		
1. Ուսումնամեթոդական աշխատանք (կամընտրական)	±		
ԸՆԴԱՄԵՆԸ	12	140/170	

Լսեցին 7. “Անգլերեն լեզու. ուսումնաօժանդակ ձեռնարկ սոցիալական աշխատանք բաժնի ուսանողների համար” ձեռնարկի՝ հրատարակմանը երաշխավորման հարցը

Ելույթ ունեցան՝ Ա. Սկրտիչյանը, Ա. Աթանեսյանը, Ա. Սահակյանը, Ա. Խաչատրյանը:

Որոշեցին. Երաշխավորել հրատարակման Սուսաննա Միրիմանյանի և Լիանա Խալաթյանի “Անգլերեն լեզու. ուսումնաօժանդակ ձեռնարկ սոցիալական աշխատանք բաժնի ուսանողների համար” ձեռնարկը:

Նիստի նախագահ՝

Ա. Ե. Սկրտիչյան

Քարտուղար՝

Ա.Վ. Աթանեսյան